

որով վաւերական համարեցաւ պատկն Զաքարիայ Աստուածափորեան ընդ Նունիայ Գէորգեան Խաչիկ գիւղացւոյ: Թ. 336:

— Յանուէն Հոգ. Կառավարութեան Ախայցխայի, որով յայտնեցաւ զառաքմանէ, Տ. Մատթէոս վարդապետի քարոզիչ քաղաքին յընթացս Մեծի պահոց: Թ. 346:

— Յանուէն Վիճակային Կոնստատրիայի Վրաստանի և Իմերէթի որով թոյլատրեցաւ թաղել յեկեղեցւոջ Խօջիվանից զիշխանուհի Մագթաղինէ Բէհրութեան: Թ. 356:



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅՈՒ  
ԺԽԵԿԱՆ ԿԸՆՈՆԵՒՐՈՒԹԻՒՆ

Տաճի բոյլ սպագրել իբր ծրագիր  
վասն նկատողութեան:

Մկրտիչ Կարուղիկոս Ամենայն Հայոց

Հայաստանեայց Եկեղեցու ծխական համայնքները կառավարուել են և կառավարուում են մինչև օրս համաձայն այն կարգերի և կանոնների որ որքազործուած լինելով դարաւոր սովորոյթով այժմս էլ ընդունուած և դործող են հանդիսանում ծխական ժողովրդի եկեղեցական կենցաղավարութեան և դործունէութեան համար: Սովորոյթով հաստատուած այդ կարգ և կանոնը աւելաւին մի ամփոփ և լիակատար արձանագրման չէ ենթարկուած: Զանազան ժամանակներում եկեղեցական այլ և այլ խնդիրների վերաբերեալ լոյս տեսած առանձին կանոնադրութիւններ և օրէնսդրութիւններ շատ կողմերից շօշափել են ծխական համայնքի կազմակերպութիւնը, յիշատակել նրա դործունէութեան սկզբունքները, սակայն ծխական համայնքին յատկապէս նուիրուած չլինելով, ի հարկէ այդ կողմնակի կանոնադրութիւնները և օրէնսդրութիւնները չէին կարող անթերի և ամբողջացած մի արձանագրութիւն լինել անբող ծխական կանոնական կարգերի: Մինչդեռ մի ամփոփ և ըստ կարելւոյն լիակատար ծխական կանոնադրութեան կարիքը գնալով աւելի և աւելի զգալի էր դառնում և բազմիցս արտայայտուած

Թէ նորին Վեհափառութեանը մատուցած խնդիրներում և թէ մամուլի էջերում: Այդ կարիքին բաւարարութիւն տալու հողատար գիտաւարութեամբ նորին Վեհափառութիւնը ի սրբատառ կոնդակով մի յատուկ Յանձնաժողով է գումարում Մայր Աթոռի միաբաններէց և ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի աշխարհական ուսուցիչներէց և հրամայում ձեռնարկել ծխական կանոնադրութեան յօրինմանը:

Հայրապետական կոնդակի բովանդակութիւնն է.

«Ունելով առաջի աչաց, զի ցարդ պակասին մեզ ընդհանրական կանոնադրութիւնք վասն միօրինակ և հաստատուն կարգաց ծխական ժողովոց և ընտրութեանց առ հասարակ, որով վարեսցին յամենայն եկեղեցիս Հայոց որ ի Ռուստատան, այսու Հայրապետական կոնդակաւ Մերով կարգեմք զՁեզ ի Յանձնաժողով առ ի ժողովել ի մի զամենայն մասնական կանոնադրութիւնս, ծրագիրս և առանձնական կարգադրութիւնս տուեալս երբէք երբէք ի Հայրապետաց, յառաջնորդաց, ի յաջորդաց և ի ժողովրդականաց, և խնամով մշակել և կազմել զընդհանրական կանոնադրութիւն, անթերի ըստ կարելոյն և ամենայնիւ հաւատարիմ սղոյ նախնաւանդ կարգաց և կանոնաց ս. Եկեղեցւոյս մերոյ, որ ի վերայ անդրդուելի հիմանն սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, և առաջի առնել Մեզ ի հայեցողութիւն: Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց: — Ի 4-ն գեկտեմբերի 1900 ամի և ըստ սոմարիս մերում ՌՅԾ. ի Հայրապետութեան մերում Ա. ամի, յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի Վաղարշապատ. Թ. 1353»:

Յանձնաժողովը համաձայն սրբատառ կոնդակիս հաւարել է եղած կանոնական և օրինական նիւթերը, մշակել և կազմել մի ընդհանուր ծխական կանոնադրութիւն և ներկայացրել նորին Վեհափառութեան:

Յանձնաժողովը ի նկատի է ունեցել և օգտուել հետևեալ կանոնադրութիւններէց և օրէնսդրութիւններէց՝

— 1836 թ. «Պոլոժենիէ» կոչուած օրէնսդրութիւնը, որ մեր եկեղեցու հնաւանդ կանոնական կարգերի մի արձանադրութիւն է հաստատուած նաև պետութեան կողմից:

— Թեմական և ծխական ուսումնարանների կանոնադրութիւններ, պատշաճաւոր ժողովներից յօրինուած և ամենայն Հայոց Կաթողիկոսներից վաւերացուած:

— Հայրապետական մասնական կոնդակներ և կարգադրութիւններ:

— Ազգային Սահմանադրութիւն Հայոց» (Նիզամնամէի մելէթի Էրմէնիան) 1863 թ.:

— «Կանոններ և հրահանգ Ս. Պետերբուրգի և Մոսկուայի Հայոց եկեղեցապատկան ստացուածքների կառավարութեան մասին»:

— Թեմակալ Առաջնորդների և Յաջորդների նախագահութեամբ հոգևորականներից և աշխարհականներից գումարուած ժողովների կազմած կարգադրութիւններ և հրահանգներ ծխական ընտրութիւնների և ծխական պաշտօնեաների գործունէութեան համար:

— Վիւէի Կայսերական սրբոյն Ալաղիմիբի Համալսարանի պրոֆէսոր իրաւաբան Սուլման Եղիազարեանից Նորին Աեհափառութեան հրամանով յօրինուած «Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցւոյ բնդհանուր ընտրական կանոնների նախագիծը»:

Յանձնաժողովիս յօրինած կանոնադրութիւնը մի հաւաքումն է այդ կանոնադրութիւններից և արձանագրումն տիրոջ կարգերի, մշակուած և զտուած «ամենայնիւ հաւատարիմ ոգւոյ նախնաւանդ կարգաց և կանոնաց սուրբ Եկեղեցւոյս մերոյ», որ ժողովրդականութեան ոգին է, և «ի վերայ անդրդուելի հիման սրբոյ Աւետարանին Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ», որ մարդասիրութեան և արդարասիրութեան աստուածազիր աւետարանն է:

## Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցու Ծխական Կանոնադրութիւն

1. Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի ամեն մի հայ եկեղեցու կամ աղօթատան բոլոր ծխականները նոյն եկեղեցու բոլոր միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին կազմում են մի ծխական համայնք:

2. Որ և է հայ եկեղեցու կամ աղօթատան ծխական են համարուում այն անձինքը որոնք առ նուազն վեց ամիս իբրև ծխական արձանագրուած են նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան քահանաներից մէկի մատեանում (տես յօդ. 88):

3. Ծխականների պարտականութիւնն է իրանց եկեղեցու ծխական ժողովի խնդրած ծառայութիւններին յանձնառու և եկեղեցական պէտքերի պահանջած ծախքերին մասնակից լինել:

4. Մի անձն միևնոյն քաղաքում կամ գիւղում կարող է միայն մի եկեղեցու կամ աղօթատան ծխական լինել: Իսկ տարբեր քաղաքներում կամ գիւղերում՝ կարող է միաժամանակ մի քանի եկեղեցիների ծխական լինել, ենթարկուելով այդ եկեղեցիներից իւրաքանչիւրի ծխական ժողովից սահմանուած տուրքերին և բոլոր ծխական պարտականութիւններին:

5. Ծխական բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգևորական, և թէ աշխարհական, թէ պատուաւոր և թէ վարձատրելի, ընտրուած են ծխական ժողովից:

6. Բոլոր պաշտօնեաները վերընտրելի են բացի յատկապէս յիշուածներէրց:

7. Իւրաքանչիւր եկեղեցի կամ աղօթատուն կարող է ունենալ մէկ կամ մէկից աւելի քահանայ: Իւրաքանչիւր քահանայի ենթադրուած է ժողովուրդ առնուազն հարար (1000) հոգի (շունչ՝ արական և իգական, մեծ և փոքր): Բացառիկ դէպքերում այս թուից (1000 հոգուց) պակաս հոգու համար էլ կարելի է ընտրել առանձին քահանայ՝ սակայն միմիայն այն առանձնացած տեղերի համար, ուր չկայ ոչ մի քահանայ և որի համայնքը երաշխաւորում է լիապէս ազահովել քահանայի տնտեսականը:

8. Իւրաքանչիւր եկեղեցու կամ աղօթատան բոլոր իրաւասու ծխականները նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան հոգևոր պաշտօնեաների հետ միասին կազմում են ծխական ժողով:

9. Նորեկները, այսինքն մի այլ ծխական համայնքից տեղափոխուողները՝ նոր եկեղեցու կամ աղօթատան ծխական համարուել կարող են սոյն եկեղեցու ծխական գրքուելուց վեց ամիս յետոյ (տես յօդ. 2):

10. Ժամաւորները, որոնք ծխական չեն՝ ծխական ժողովին մասնակցելու իրաւունք չունին:

11. Ծխական իրաւասու են, այսինքն՝ ծխական ժողովներին մասնակցելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին, 25 տարին լրացրած բոլոր ծխականները, բացի նրանցից, որոնք հետեւեալ յօդուածի (յօդ. 12) հիման վրայ զրկուած են այդ իրաւունքից: Տարիքը պէտք է հաշուել ոչ ամիսներով, այլ տարեթուերով:

12. Ծխական ժողովին մասնակցելու և ընտրուելու իրաւունքից զրկուած են այն ծխական իրաւասուները՝

ա) որոնք Հոգևոր իշխանութեան օրինական դատաստանով զրկուած են այդ իրաւունքներից և կամ դանուում են ապաշխարութեան տակ:

բ) որոնք պետական օրէնքների զօրութեամբ և դատաստանով քրէական յանցանքների համար բոլորովին կամ մասամբ զրկուած են իրաւունքներից:

գ) որոնք դատաստանի տակ են այնպիսի յանցանքների համար, որպիսիների հետեանքը լինում է բոլորովին կամ մասամբ իրաւունքներից զրկուելը, — մինչև դատաստանով արդարանալը:

դ) որոնք սովորոյթով ընդունուած կամ ծխական ժողովից սահմանուած եկեղեցական տուրքերը չեն վճարել (բացի չունեորներից, որոնք՝ ըստ սովորոյթի կամ ժողովի որոշմամբ՝ ազատ են տուրք վճարելուց) և որոնց վրայ եկեղեցական ազատիկներ կան: (Ապառիկ է համարուում իւր ժամանակին չվճարուած պարտքը):

ե) Աշակերտները և ուսանողները (ՏՄՏ. ՄԻՍՅ. 1884, 120—123):

13. Ծխական ժողովը սկսում է պատշաճաւոր ազօթքով, որ ասում է ներկայ հոգևորականներից աւագագոյնը. իսկ եթէ հոգևորական չլայ՝ ժողովի նախագահը:

14. Ծխական ժողովի նիստերը դաւբաց են լինում,

բացի արտակարգ դէպքերից, երբ ժողովի որոշմամբ նիստը գոնփակ է տեղի ունենում:

15. Բացի յատկապէս նախատեսուած դէպքերից ծխական ժողովների բոլոր վճիռները և ընտրութիւնները կատարուում են ձայների հասարակ մեծամասնութեամբ: Ձայների հաւասարութեան դէպքում գերակշռում է այն կողմը, որին իւր ձայնը տալիս է ժողովի նախագահը:

16. Միմիայն կանոնաւոր կերպով կայացած՝ ծխական ժողովում սահմանուած և ստորագրուած վճիռները և համախօսականները համարուում են վաւերական և օրինական զօրութիւն ունեցող: Ծխական ժողովից դուրս կազմուած որ և է համախօսական կամ բազմաստորագիր թուղթ, նոյն իսկ պաշտօնապէս վաւերացուած ստորագրութիւններով, ոչ մի օրինական ոյժ չունի:

17. Եթէ իրաւասու ծխականներից մէկը ժողովի իրաւասութեանը պատկանող որ և է գործի վերաբերմամբ խարդախութիւն, կեղծիք կամ խաբեբայութիւն է արել և ժողովի կողմից այդ ապացուցուել է՝ ժողովի յատուկ վճռով այդպիսին կարող է զրկուել նոյն գործին առ ժամանակ կամ ընդ միշտ որ և է կերպով մասնակցելու իրաւունքից:

18. Ծխական ժողովի իրաւունքն է ձայների մեծամասնութեամբ փակել, ընդհատել կամ յետաձգել նիստի շարունակութիւնը նոյն կամ ուրիշ օրուայ:

19. Ծխական ժողովի իրաւասութեանը պատկանում են հետևեալ գործերը.

ա) Քահանայացուների և եկեղեցական սպասարանների ընտրութիւնը, ծխաբաժանութիւնը, բարոյիչներ հրաւիրելը:

բ) Ծխական համայնքի տնտեսականի ընդհանուր կառավարութիւնը և տնօրինութիւնը, երեսօխիս, հաշուետեսներ և հաշուետեսների փոխանորդներ ընտրելը և պաշտօնից հեռացնելը. նրանց գործունէութեան քննութիւնը, վերահսկողութիւնը և հաշուառութիւնը. յանցաւորութեան

դէպքում՝ նրանց քրէական և քաղաքացիական դատի ենթարկելը յատուկ հաւատարմատարի ձեռքով:

- դ) Եկեղեցու կամ աղօթատան բարեզարդութեան մասին հոգացողութիւն (անօթների մատակարարութիւն, երգեցիկ խումբ կազմակերպել և պահելը, և այլն):
- դ) Քահանաների և եկեղեցական այլ պաշտօնեաների տնտեսական ապահովութեան խնդիրը:
- ե) Ծխական տուրքեր և պարտականութիւններ սահմանելը:
- զ) Ծխական համայնքի ընտանիքների երկու սեռի մանուկների կրօնական դաստիարակման վրայ հոգացողութիւն և հսկողութիւն: Եկեղեցում կամ նրա դաւթում սովորեցնել կարգալ գրել, աղօթքներ, փոխասացութիւն, ժամերգութիւն, տուրք Գրքի և մասնաւորապէս տուրք Աւետարանի ընթերցանութիւն եկեղեցական պաշտօնեաների ձեռքով կամ նրանց հսկողութեան տակ:
- է) Ծխական համայնքի բարեգործական գործունէութեան ընդհանուր տնօրէնութիւնը, նոյն եկեղեցուն կամ աղօթատան պատկանող աստուածահաճոյ հաստատութիւնների պահպանութիւնը, վերահսկողութիւնը և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը:
- ը) Հարկ եղած դէպքերում ծխական համայնքի շահերը պաշտպանելը պետական դատարաններում, քրէական և քաղաքացիական դատեր վարելով երեսփոխի կամ մի յատուկ հաւատարմատարի ձեռքով:
- թ) Վկայութիւն և կարծիք յայտնել եկեղեցական զանազան հաստատութիւններում քննուող և վճռուող այն գործերի և խնդիրների մասին, որոնք վերաբերում են ծխական համայնքին կամ

նոյն համայնքի աշխարհական և հոգևորական անդամներին:

ժ) Հարկաւոր գէպքերում հոգաբարձական յանձնաժողովներ ընտրելը՝ շինութիւններ, նորոգութիւններ և ծխական ժողովից յանձնարարուած այլ գործողութիւններ կատարելու համար:

ժա) Ծխական համայնքի բոլոր գործերի վերաբերմամբ անհրաժեշտ և հարկաւոր կարգադրութիւններ սահմանելը:

ժբ) Պատգամաւորներ, ներկայացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամաւորական (օր. թեմական) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառնութեանց մասնակցելու համար:

20. Ծխական ժողով հրաւիրելու իրաւունք ունին՝

ա) Հոգևոր իշխանութիւնը,

բ) Նոյն եկեղեցու իւրաքանչիւր քահանայ,

գ) Երեսփոխը,

դ) Հաշուետեսները և

ե) Մի քահանայ ունեցող ծխական համայնքում իրաւասու ծխականներից առ նուազն տասն և երկու (12) հոգի միասին, իսկ մէկից աւելի քահանայ ունեցող ծխական համայնքում՝ իրաւասուներից առ նուազն քսան և չորս հոգի (24) միասին:

21. Ժողովի հրաւերը կատարուում է գրաւոր հրաւիրաթղթով. պահանջուում է նաև բանաւոր ծանուցումն եկեղեցում:

— Հրաւիրաթուղթը ուղարկուում է եկեղեցու կամ աղօթատան բոլոր իրաւասուներին, իսկ մի մի օրինակ կախ է տրուում (առ նուազն մի շաբաթ) եկեղեցու պատի վրայ, մուտքի դրան մօտ՝ ներսը և դուրսը՝ յատուկ տեղում: Հրաւիրաթղթում արձանագրուած պիտի լինի ժողովում խորհրդածուելիք և վճուուելիք հարցերի օրակարգը:

—Եկեղեցու կամ աղօթատան քահանաները պարտաւոր են եկեղեցում բերանացի ծանուցումներ անել գումարուելիք ժողովի մասին գոնէ երեք անգամ:

22. Սովորական ծխական ժողովատեղին է եկեղեցին կամ եկեղեցապատկան շէնքերը: Արտակարգ դէպքերում ժողովը կարող է գումարուել և մասնաւոր շէնքում: Ժողովի ժամանակ եկեղեցում սեղանի վարագոյրը քաշուած է լինում:

23. Ժողով եկող իւրաքանչիւր ծխական իրաւասու ստորագրում է իւր անունը և ազգանունը յատուկ թերթի վրայ:

24. Ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարւում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան իրաւասուների (տարեցուցակում արձանագրուածների, տես յօդ. 89) ընդհանուր թուի կիսից աւելի է կամ եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը հասնում է առ նուազն հարիւրի (100):

25. Եթէ առաջին անգամ ժողովը չկայանայ՝ գումարուած ծխական իրաւասուների սակաւութեան պատճառով (յօդ. 24)՝ կրկին անգամ իրաւասուները ժողովի են հրաւիրւում<sup>21</sup> յօդուածում ցոյց տուած եղանակով, նշանակելով հրաւիրաթղթում, որ այս երկրորդ ժողովի հրաւերն է:

26. Երկրորդ ժողովը (յօդ. 25) կանոնաւոր է համարւում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցու կամ աղօթատան իրաւասուների (տարեցուցակում արձանագրուածների, տես յօդ. 89) ընդհանուր թուի մի հինգերորդ ( $\frac{1}{5}$ ) մասից պակաս չէ, կամ եթէ ներկայ եղող իրաւասուների թիւը հասնում է առ նուազն յիսունի (50):

27. Եթէ երկրորդ անգամ հրաւիրուած ժողովը ներկայ եղող իրաւասուների թուի սակաւութեան պատճառով չկայանայ, Հոգևոր իշխանութեան պարտականութիւնն է, եթէ միայն կան կարևոր և անյետաձգելի հարցեր, իւր նախաձեռնութեամբ և իւր ձեռքում եղած բո-

լոր միջոցներով ծխական իրաւասուններին ժողովի գումարելու իսկ անյաջողութեան դէպքում Հոգևոր իշխանութիւնը դիմում է թեմական իշխանութեան, խնդրելով անօրէնութիւն:

28. Եթէ ժողովականները (ժողովում ներկայ իրաւասունները) ժողովը դեռ պաշտօնապէս չփակուած հեռանան, և ներկայ մնացողների թիւը նիստի բացման ժամանակ բոլոր ներկայ եղող իրաւասունների թուի կիսից պակաս լինի, ժողովն ինքն ըստ ինքեան փակուած է համարում:

29. Քաղաքներում ծխական ժողովի նիստը բաց է անում նոյն ծխական համայնքի քահանան, քահանայի բացակայութեան դէպքում երեսփոխը, իսկ երեսփոխի բացակայութեան դէպքում՝ ներկայ գրագէտ իրաւասուններից տարիքով աւագը: Ժողով բացողն 23-րդ յօդուածում յիշուած թերթի ստորագրութիւնները բարձրաձայն համեմատում է ծխական իրաւասունների տարեցուցակի (տես յօդ. 89, 90) հետ և ստուգում ներկայ գտնուող ծխականների իրաւունքը ժողովին մասնակցելու (այս վերստուգուած թերթը յետոյ կցւում է ժողովի արձանագրութեանը). ապա ձեռնարկում է նախագահի ընտրութեանը և նախագահի ընտրութիւնից յետոյ համարում է լսկ ժողովական: Փիւղերում՝ եթէ ժողովին ներկայ է նոյն շրջանի Յաջորդը կամ գործակալ քահանան՝ սրանք են բաց անում նիստը և կարող են ի պաշտօնէ նախագահել ժողովին:

30. Ծխական ժողովի քարտուղարին, քուէտուփերի վրայ հսկողներին, քուէներ համարողներին, անգրագէտների համար թերթիկների վրայ գրողներին և նման պաշտօնեաներին ընտրում է ծխական ժողովը:

31. Նախագահը հսկում է ընդհանուր կարգապահութեանը և ծխական ժողովի բոլոր գործողութիւնների՝ կանոնաւորութեան և վայելչութեան սահմաններից չչեղուելուն:

32. Նախագահն իրաւունք ունի ծխական ժողովին ներկայ եղող կողմակի, ոչ ժողովական (յօդ. 14) անձերին:

որ և է անկարգութեան դէպքում, անմիջապէս հեռացնել ժողովից:

33. Երկու անգամ պաշտօնապէս կարգի հրաւիրելուց յետոյ՝ նախագահն իրաւունք ունի անկարգապահ ժողովականին զրկել խօսելու իրաւունքից, իսկ անկարգութեան յամառ շարունակութեան դէպքում, նոյն իսկ հրաւիրել ժողովականին թողնել ժողովը և հեռանալ. իսկ ընդդիմադրութեան դէպքում՝ դիմել ստաիկանութեանը:

34. Ծայրայեղ դէպքերում՝ երեք անգամ ամբողջ ծխական ժողովը կարգի հրաւիրելուց յետոյ, երբ այլ ևս անհնարին կլինի շարունակել նիստը խռովութիւնների պատճառով, նախագահն իրաւունք ունի նիստը փակուած յայտարարել:

35. Եթէ երկու միմեանց անմիջապէս յաջորդող պաշտօնապէս բացուած կանոնաւոր ժողովներ խռովութիւնների պատճառով չեն կայանում, այս դէպքում հոգեւոր իշխանութեան իրաւունքն է՝ կարգել նշանակովի նախագահ նոյն ծխական համայնքին պատկանող կամ դրսի հոգեւորականներից և աշխարհականներից:

36. Ծխական ժողովում խորհրդածութեան և ձայնատուութեան առարկայ են լինում միմիայն օրակարգում (տես յօդ. 21) նշանակուած հարցերը՝ բացի յատկապէս յիշուած խնդիրներից (տես յօդ. 14, 38, 40, 91 և այլն):

37. Իւրաքանչիւր ժողովական ունի միայն մի ձայն կամ մի քուէ:

38. Որ և է պատճառով ժողով չեկող ծխական իրաւասուն իւր ձայնը կամ քուէն ուրիշին յանձնելու իրաւունք չունի: Բայց իրաւունք ունի իւր գրաւոր կարծիքն ուղարկել ժողովին, որ կարող է կարգացուել քուէարկութիւնից առաջ, եթէ ժողովն այդ կամենայ: Բայց այս գրաւոր կարծիքը հաշուի չէ առնուում որպէս ձայն քուէարկութեան ժամանակ, այլ կցուում է ժողովի արձանագրութեանը:

39. Օրակարգում նշանակուած խնդիրներում անձ-

նական շահ ունեցող ժողովականը չէ կարող ընտրուել ծխական ժողովի նախագահ (յօդ. 40):

40. Այն ժողովականները, որոնք որ և է անձնական շահ ունին խորհրդածուելիք և վճռուելիք խնդրում, կամ եթէ այդ խնդիրն իրանց է վերաբերում՝ այդ խնդրի խորհրդածութեան և վճռման ժամանակ ժողովից հեռանում են: Ժողովականի կամ նախագահի (յօդ. 39) շահակից լինելը որոշում է ժողովը: Այդպիսիներից ժողովը կարող է հարցնել նրանց կարծիքը և ունեցած տեղեկութիւնները:

41. Երբ նախագահը որ և է պատճառով դեռ ժողովը չփակուած ստիպուած է թողնել նախագահութիւնը, պէտք է ընտրել նոր նախագահ:

42. Ի պաշտօնէ և նշանակովի նախագահողները՝ եթէ նոյն ծխական համայնքի իրաւասու չեն՝ ձայնատուութեան կամ քուէարկութեան չեն մասնակցում:

43. Ծխական ժողովի որոշմամբ՝ ձայնատուութիւնը կամ քուէարկութիւնը (թէ վճռուելիք հարցերի և թէ ընտրութիւնների) կարող է լինել թերթիկներով, քուէներով և կամ ձեռք բարձրացնելով:

44. Ձայնատուութիւնը գաղտնի է լինում, եթէ ժողովականներից առ նուազն հինգ հոգի քուէարկութիւնից առաջ այդ պահանջեն:

45. Թեկնածուներ որոշելիս նախագահը բաժանում է բոլոր ժողովականներին իւր կնքով կամ ստորագրութեամբ նշնած մի մի թերթիկ, որի վրայ ամեն մի ժողովական գրում է իւրաքանչիւր ընտրելի պաշտօնեայի համար երկու թեկնածուից ոչ աւելի: Այդ թերթիկները հաւաքւում, հերթով կարդացւում են և նշանակւում է իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայների թիւը: Այնուհետև թեկնածուները քուէարկւում են ստացած ձայների առաւելութեան կարգով:

46. Քուէարկուել կարող են նաև ժողովից բացակայող անձինք, եթէ առաջարկողներն երաշխաւորում են, որ նրանք չեն մերժի իրանց ընտրութիւնը:

47. Ինքը թեկնածուն չէ կարող մասնակցել իւր քուէարկութեանը:

48. Երբ մի պաշտօնի համար մի քանի անձինք պիտի ընտրուին (հաշուետեսներ, պատգամաւորներ և այլն), ընտրութիւնն անպատճառ կատարուում է թերթիկներով, եթէ այդ պահանջեն ժողովականներից առնուազն հինգ հոգի:

49. Երբ ընտրութիւնը թերթիկներով է կատարուում ընտրողական թերթիկները նշանակուում են համարներով, նշնուում են նախագահի ստորագրութեամբ կամ կնքով, հաշուով բաժանուում են ժողովականներին, ձայնատուութիւնից յետոյ հաշուով հաւաքուում և ընտրութեան արդիւնքը արձանագրելուց յետոյ՝ անմիջապէս և տեղնուտեղը ոչընչացուում են:

50. Եթէ որ և է պաշտօնի համար ընտրուելու են մի քանի անձինք և ընտրութիւնը կատարուում է թերթիկներով (յօդ. 48)՝ իւրաքանչիւր ժողովական իրաւունք ունի իւր ընտրողական թերթիկի վրայ՝ փոխանակ տարբեր մարդկանց անուններ գրելու, գրել միւսնոյն մարդու անունը այնքան անգամ որքան հոգի են ընտրուելու: Քուէարկուողը համարուում է ստացած այնքան ձայն, որքան անգամ որ նրա անունը կրկնուած է թերթիկներում:

51. Քուէարկութեան ենթարկուած թեկնածուների ստացած քուէները համարուում են և ձայների առաւելութեան կարգով ցուցակադրուում: Ամենից շատ ձայն ըստացողը համարուում է առաջին ընտրեալ, նրանից պակաս ստացողը՝ երկրորդ ընտրեալ, և այսպէս աստիճանաբար մինչև որ լրանայ ընտրելի պաշտօնեաների հարկաւոր թիւը: Սոյն՝ այսինքն ստացած քուէների առաւելութեան՝ կարգով դասաւորուում են և անձնափոխանորդները:

52. Միայն այն ձայնատուութիւնը կանոնաւոր կարող է համարուել, որին մասնակցել է՝ նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասուների կիսից աւելին:

—Միայն այն վճիռը կամ ընտրութիւնը կայացած և

վաւերականն է համարուում, որ ստացել է յօգուտ իւր՝ նիստի բացման ժամանակ ներկայ եղող՝ իրաւասունների քուէների կիսից աւելին:

53. Ծխական ժողովը փակուելուց առաջ քարտուղարը կարդում է իւր կազմած արձանագրութիւնը, որի մէջ յաջորդական կարգով արձանագրուած են լինում ժողովի բոլոր անցքերը և վճիռները: Մանրամասնօրէն արձանագրուում են՝ նախագահի կողմից կարգի հրաւիրման, ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու դէպքերը: Արձանագրութիւնը կարդացուելուց յետոյ՝ ուղղում են սարդած սխալները՝ և ապա բոլոր ժողովականները ստորագրում են նոյն այդ ժողովում:

54. Ծխական ժողովի վճիռների և ընտրութիւնների դէմ բողոք ունեցող ժողովականներն իրաւունք ունին արձանագրութեան տակ իրանց ստորագրութեան վրայ աւելացնել միայն այս երկու բառը՝ «բողոք ունիմ»: Բողոք ունեցողն երեք օրուայ ընթացքում տալիս է իւր դրաւոր բողոքը նախագահին կամ քարտուղարին արձանագրութեանը կցելու համար: Բողոքողն իրաւունք ունի իւր բողոքի պատճէնը վաւերացնել տալ նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ, իւր մօտը պահելու համար:

55. Ծխական ժողովի բողոքաւոր վճիռների արձանագրութեանց պատճէնները՝ ժողովի օրից առ առաւելն մի շաբաթուայ ընթացքում նախագահը պարտաւոր է ուղարկել մերձաւոր Հոգևոր իշխանութեան միջոցով թեմական իշխանութեանը: Թեմական իշխանութեան վճռի կամ բացատրութեան դէմ, հարկ եղած դէպքում, կարելի է բողոքել Հոգևոր բարձրագոյն իշխանութեան:

56. Այն անբողոք վճիռները որոնք վերաբերում են ծխական ժողովի իրաւասութեան պատկանող դորժերին (յօդ. 19), անմիջապէս դորժադրուում են, բացի յատկապէս յիշուածներից:

57. Այն պաշտօնեաների ընտրութիւնը, որոնք հոգևոր կոչումն են ընդունելու (չորս աստիճանաւորի, սար-

կաւագի և քահանայի)՝ մերձաւոր Հոգևոր իշխանութեան ձեռքով ներկայացոււմ է Կոնսիստորիային ի պատշաճաւոր տնօրէնութիւն:

58. Երեսփոխի, հաշուետեսների և հաշուետեսների փոխանորդների ընտրութիւնը և հեռացումը հաղորդոււմ է ի հաստատութիւն և ի գիտութիւն Կոնսիստորիային:

—Կոնսիստորիան, եթէ դանի որ ընտրուածը համապատասխան չէ կանոններու մտ նշանակուած որ և է օրինական պահանջի, առ առաւելն երկու ամսուայ ընթացքում յայտնոււմ է այդ մասին ծխական ժողովին: Երկու ամսուայ ընթացքում Կոնսիստորիայից պատասխան չըստացուելու դէպքում ծխական ժողովի վճիռն անմիջապէս գործադրոււմ է և ընտրուածներն ստանձնոււմ են իրանց պաշտօնները:

—Երկու ամիսն հաշոււմ է ընտրութեան օրից:

59. Հոգևոր պաշտօնեաներ ընտրելիս ծխական ժողովը պիտի անշեղ կերպով առաջնորդուի հետևեալ հրահանգով.

ա) Ընտրելիները պիտի համապատասխանեն, բացի մեր եկեղեցու ընդհանուր կանոնական պահանջներից՝ նաև հետևեալ պայմաններին. պիտի օժտուած լինեն բարոյական արժանիքներով և ունենան քաղաքների համար առ նուազն թեմական կամ այլ միջնակարգ դպրոցի աւարտման վկայագիր. իսկ գիւղերի համար առ նուազն չորս դասարանի վկայագիր. յիսուն տանից պակաս գիւղի համար առ նուազն թեմական դպրոցի երկրորդ դասարանի վկայագիր: Աշխարհիկ դպրոցներում կրթուածները կրօնական առարկաներից և Հայոց լեզուից՝ պահանջուած ծրագրով քննութիւն պիտի տան թեմական դպրոցում կամ ս. Էջմիածնի Հոգևոր ձեմարանում:

բ) Վկայագիր չունեցողները պիտի պատշաճաւոր քննութիւն տան՝ պահանջուելիք առարկաներից վկայագիր ձեռք բերելու համար՝ միայն թե-

մական դարոցներում կամ ս. Էջմիածնի Հոգ. Ճեմարանում:

զ) Ընտրուածի բարոյական անարատութեան մասին վկայելու է ծխական ժողովը:

60. Հոգևոր պաշտօնեաների ընտրութիւն կարող է լինել միայն այնպիսի ծխական ժողովում, որին մասնակցում են՝ ընտրութեան քաղաքում կամ գիւղում բնակուող՝ նոյն եկեղեցու բոլոր ծխական իրաւասունների երկու երրորդականը ( $\frac{2}{3}$ ):

61. Հոգևոր պաշտօնեայ ընտրուած կարող է համարուել միայն նա, ով ստացել է յօգուտ իւր ընտրութեան քաղաքում կամ գիւղում բնակուող՝ նոյն եկեղեցու կամ աղօթատան բոլոր ծխական իրաւասունների ձայների կիսից աւելին:

62. Գիւղերում Հոգևոր պաշտօնեաների ընտրութիւնը կատարում է անպատճառ գործակալ քահանայի կամ տեղական Յաջորդի ներկայութեամբ և նախագահութեամբ:

63. Ծխական համայնքը հոգում է իւր հոգևոր պաշտօնեաների անտեսականը հետևեալ զանազան եղանակներով, ըստ որոշման ծխական ժողովի.

ա) Մշտական ռոճիկ, որ սահմանում է ծխական ժողովը.

բ) Տուրքեր, որ ստանում են հոգևոր պաշտօնեաները հոգևոր ծխակատարութեանց համար.

գ) Կամաւոր նուիրաբերութիւններ (յօդ. Պոլոժ.  $\frac{1246}{127}, \frac{1247}{128}$ ):

դ) Գիւղերում — հոգ, կալամաս (տարեհախ):

64. Հոգևոր պաշտօնեաների սովորոյթով ընդունուած հասոյթները կարելի է փոխարինել ռոճկով այնպիսի ծխական ժողովում և ձայների այնպիսի մեծամասնութեամբ, որ պահանջում են այս կանոնադրութեան 60 և 61 յօդուածները:

65. Իւրաքանչիւր ծխական համայնք ինքն է կառավարում և տնօրինում ծխական ժողովի միջոցով իւր

գոյքը (բոլոր շարժական և անշարժ կայքը) յօգուտ նոյն ծխական եկեղեցու հիմնարկութիւնների և անձերի:

—Նոյն ծխական համայնքի շրջանից դուրս անելիք ծախսերի համար անհրաժեշտ է Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան թոյլտուութիւնը:

66. Առանց ծխական ժողովի համաձայնութեան նոյն ծխական եկեղեցուն յատկացուած և պատկանող գոյքից (բոլոր շարժական և անշարժ կայքից) ոչ մի ծախս լինել չէ կարող:

67. Ծխական ժողովն իրաւունք ունի իւր որոշմամբ տարեկան ծախս անել գիւղերում՝ յիսուն (50) բուբլուց ոչ աւելի, իսկ քաղաքներում՝ երեք հարիւր բուբլուց (300) ոչ աւելի: Մինչև այս գումարներն եղած ծախսի մասին հաղորդուում է Կոնսիստորիային՝ մերձաւոր Հոգևոր իշխանութեան ձեռքով ի գիտութիւն: Իսկ այս գումարներից վեր ծախսերի համար ծխական ժողովը պիտի խնդրէ Բարձրագոյն Հոգևոր իշխանութեան թոյլտուութիւնը:

68. Տնտեսական, այսինքն դրամական և գոյքի վերաբերեալ, այն խնդիրներն որոշելու համար, որոնց գումարը անցնում է ծխական եկեղեցու տարեկան եկամուտից կամ յամենայն դէպս գիւղերում՝ հարիւր (100) բուբլուց, իսկ քաղաքներում՝ վեց հարիւր (600) բուբլուց՝ —պահանջուում է որ վճիռը ստանայ յօգուտ իւր սովորական ծխական ժողովին (տես յօդ. 24, 26) ներկայ իրաւասունների ձայների երկու երրորդականից ( $\frac{2}{3}$ ) ոչ պակաս:

69. Նոր ծխական տուրքեր սահմանելու կամ հները փոփոխելու համար պահանջուում է վերոյիշեալ 68 յօդուածում սահմանուած ձայների մեծամասնութիւնը:

70. Ծխական եկեղեցապատկան դրամագլուխները տոկոսով աճեցնելու համար պիտի յանձնուին պետական կամ հասարակական բանքային հաստատութեանց: Այս դրամագլուխները կարելի է նաև մասնաւոր մարդկանց յանձնել՝ եթէ եկեղեցու համար այդ յարմար և ձեռքնտու դատուի և յանձնուելիք գումարը հաստատ դրաւակաՆով ապահովուի՝ միայն թէ Կոնսիստորիայի թոյլտուութեամբ:

և պատասխանատուութեամբ (տես Պոլոժ. 104. 119 | 1224)։

71. Այն բոլոր ծխական եկեղեցիները, որոնք տարեկան հազար (1000) բուբուլց աւելի եկամուտ ունին, պէտք է իւրաքանչիւր տարուայ սկզբում ծխական ժողովով իրանց տարեկան ելեմուտքի նախահաշիւը (բիւջէ) կազմեն, թեմական իշխանութեան հաստատել տան և անցեալ տարուայ հաշիւն ու զեկուցումը երեսփոխից ու հաշուետեսներից ստանալուց և ժողովում քննելուց յետոյ՝ պէտք է տպագրել տան այդ բոլորը, ծխական իրաւասուններին բաժանելու համար։

Այդ տպագրուած տեղեկագրից երկու օրինակ ուղարկուած է Վեհափառ Հայրապետի Դիւանը և մի մի օրինակ Հոգևոր կառավարութեան, Կոնսիստորիային, Սինոդին և Ս. Էջմիածնի պաշտօնական թերթին։

72. Իւրաքանչիւր ծխական եկեղեցի պիտի ունենայ մի ստոյգ և մանրամասն ժապաւինեալ մատեան եկեղեցու անշարժ գոյքը, անօթեղէններն և այլ իրերը և գրամագլուխները ցուցակագրելու համար, նաև այն բոլոր եկամուտների համար, որոնք որ և է իրաւունքով հասնելու են նոյն ծխական եկեղեցուն։ Նոյնպէս պիտի ունենայ մի ուրիշ «Ելեմտից ժապաւինեալ հաշուեմատեան» ծխական եկեղեցու տարեկան բոլոր ելք ու մուտքը գրելու (տես 104. Պոլոժ. 120 | 1226)։

73. Ծխական եկեղեցու գոյքի կառավարութեան ընթացիկ գործավարութեան համար ծխական ժողովն ընտրում է մի երեսփոխ երեք տարի ժամանակով։ Հին երեսփոխը կարող է վերընտրուել միմիայն այն դէպքում, եթէ նրա հաշիւները քննուած են հաշուետեսներից և ճանաչուած են ծխական ժողովից իբրև ստոյգ և անթերի, այլ և նրա գործավարութիւնն՝ անպարտաւ։

74. Նոր երեսփոխ ընտրելուց առաջ ծխական ժողովը պէտք է նախ քննէ հին երեսփոխի հաշիւները և հաշուետեսների զեկուցումը նրա գործավարութեան մասին, և ապա կատարէ նոր երեսփոխի ընտրութիւնը։ Իսկ եթէ երեսփոխը ժամանակին չներկայացնէ հաշիւները, կամ

եթէ ներկայացրած հաշիւները ծխական ժողովից կհամարուին անբաւարար կամ վիճելի—այս դէպքում՝ անմիջապէս կձեռնարկուի նոր երեսփոխի ընտրութեանը, իսկ հին երեսփոխը կհամարուի պաշտօնից հեռացած և պատասխանատու իւր գործավարութեան և հաշիւների համար:

—Ս.յս դէպքում՝ երեսփոխական գործավարութիւնը՝ մինչև նոր երեսփոխի պաշտօնավարութեան մտնելը՝ ըստ անձնուձմ են հաշուետեաները, ինչպէս այդ նախատեսուած է այս կանոնադրութեան 87 յօդուածով:

—Նոյն այս ժողովում՝ հարկ եղած դէպքում՝ կարելի է որոշել հին երեսփոխին դատի ենթարկել (տես յօդ. 19 Բ. և Ը.):

75. Նոր երեսփոխին իւր պաշտօնը ստանձնելիս պարտաւոր է ստուգել եկեղեցապատկան բոլոր գոյքի (շարժական և անշարժ) անթերի և ամբողջ լինելը և ընդունել իւր նախորդից՝ 72 յօդ. հիման վրայ կազմուած ցուցակով:

76. Հին երեսփոխը շարունակում է իւր պաշտօնավարութիւնը մինչև որ նոր երեսփոխը կստանձնէ իւր պաշտօնը և իւր նախորդից յանձնողական ստացողական ցուցակով կընդունէ ծխական եկեղեցու բոլոր գոյքը (անշարժ և շարժական, տես յօդ. 72 և 74):

77. Եկեղեցու գոյքի ամբողջութեան վրայ հսկելը, եկեղեցու արդիւնքների կառավարութիւնը, եկեղեցու գործերի պատշաճաւոր ատենական տեղերում պաշտպանութիւնը, եկեղեցական շէնքերի կառուցումը, վերանորոգումը, վարձով տալը և բոլոր նման գործերը մտնում են երեսփոխի պարտաւորութեանց շրջանը: Սա առ հասարակ գործում է իբրև հաւատարմատար ի դիմաց ծխական համայնքի. իսկ կարևոր գործերում նա իրաւունք ունի պահանջելու ծխականների ըստ կարելւոյն բազմամարդ ժողովից առանձին հաւատարմաթուղթ: Ստանալով այս հաւատարմաթուղթն այն գործերի համար, որ այս ծխական ժողովումն են որոշուած՝ նա արդէն ազատ է ամեն

տեսակ պատասխանատուութիւնից ծխական համայնքի առաջ (յօդ. Պոլոժ. 1224|129):

78. Երեսփոխները առանց ծխական ժողովի վճռի իրաւունք չունին ծախսելու՝ գիւղերում տասը (10) բուրլուց աւելի, իսկ քաղաքներում երեսուն բուրլուց (30) աւելի: Մի բուրլուց սկսած՝ բոլոր ծախսերի համար պահանջւում է ստացողի ստորագրութիւնը «Ելեմտից մատեանում», կամ առանձին ապացուցաթուղթ ստացողի ստորագրութեամբ:

79. Քաղաքներում ծխական եկեղեցու գումարներից երեսփոխներն իրաւունք չունին հարիւր (100) բուրլուց աւելի առձեռն դրամ պահելու մօտերը: Աւելի գումարները պիտի յանձնուին պետական և հասարակական բանքային հաստատութեանց (տես յօդ. 70) ծրխական եկեղեցու անունով: Այդ դրամատներից փող ստանալու համար երեսփոխը պիտի ունենայ ծխական ժողովի համաձայնութեան թուղթը (համախօսականը):

80. Գիւղերում իւրաքանչիւր վեց ամիսը մի անգամ երեսփոխը և հաշուեւեռները դանձանակը և հաշիւները ստուգելուց յետոյ — 25 բուրլուց աւելի եղած գումարը յանձնում են բանքային հաստատութեանց, այնպէս ինչպէս այդ բացատրուած է նախընթաց 79 յօդուածում:

81. Ծխական եկեղեցու ունեցած դրամատների անդորրագրերը, բանքային տոմսերը, մուրհակները և առհասարակ արժէթղթերը, եթէ դրանց բոլորի գումարը միասին հազար (1000) բուրլուց աւելի չէ, կարող են պահուել երեսփոխի մօտ, իսկ եթէ հազար բուրլուց աւելի է՝ պէտք է պահուին Հոգևոր կառավարութեան կամ Կոնսիստորիայի աւանդների դրամարկղում և կամ բանքային հաստատութեանց մէջ, ծխական եկեղեցու անունով, ըստ սրոյժման ծխական ժողովի (հմմտ. յօդ. 79):

82. Ծխական ժողովը ընտրում է հաշուեւեռներ երեք տարի ժամանակով, երեք կամ հինգ հոգի, ըստ սրոյժման ծխական ժողովի, և նոյն թուով հաշուեւեռների անձնափոխանորդներ: Անձնափոխանորդներն ստացած ընտրական

ձայների առաւելութեան կարգով կոչոււմ են պաշտօնի, երբ հաշուեաւորներից մէկը կամ մի քանիսը թողնոււմ են իրանց պաշտօնավարութիւնը, մահուան կամ հրաժարման պատճառով:

83. Հաշուեաւորներն իրանցից մէկին ընտրոււմ են նախագահ և գործերը վարոււմ են ձայների մեծամասնութեամբ:

84. Հաշուեաւորները պարտաւոր են անընդհատ հետեւել երեսփոխի գործավարութեանը, իւրաքանչիւր ամսուայ վերջը ստուգել հաշիւները և մատեանները և վաւերացնել իրանց ստորագրութեամբ, իսկ իւրաքանչիւր տարուայ վերջը ծխական ժողովին հանգամանօրէն զեկուցոււմ ներկայացնել իրանց հաշուեաւորութեան և երեսփոխի գործավարութեան և հաշիւների մասին:

85. Ինչպէս հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներին նոյնպէս և հաշուեաւորներին՝ ամեն անգամ երբ սրանք պահանջեն՝ երեսփոխները պարտաւոր են անյապաղ ներկայացնել իրանց բոլոր մատեանները և հաշիւները:

86. Հաշուեաւորները վերահսկողութեան և հաշուառութեան նոյն պարտականութիւններն ու իրաւունքներն (տես յօդ. 84 և 85) ունին նաև 19 յօդ. է. և ժ. կէտերու միջուած հոգաբարձուների և հոգաբարձական յանձնաժողովների նկատմամբ:

87. Հաշուեաւորներն են ստանձնոււմ երեսփոխի գործավարութիւնը ըստ կարելոյն կարճ միջոցով, եթէ երեսփոխն իւր պաշտօնավարութեան ժամանակը լրանալուց առաջ վախճանոււմ է կամ անակնկալ պատճառով ստիպուած է լինոււմ առ միշտ թողնել պաշտօնը: Այսպիսի դէպքոււմ հաշուեաւորները պարտաւոր են անմիջապէս ծխական ժողով հրաւիրել նոր երեսփոխ ընտրելու համար:

88. Իւրաքանչիւր քահանայի ծխական ժողովից տրոււմ է մի ժապաւինեալ մատեան, որի մէջ քահանան պարտաւոր է ճշտիւ արձանագրել իւր բոլոր ծխերը, դրանց բոլոր արական և իգական անդամներով: Մատեանոււմ իւրաքանչիւր ընտանիքի առ նուազն յատկացոււմ է մի թերթ:

Այդ մատեանում արձանագրուում է իւրաքանչիւր ծխականի անունը, ազգանունը, ծննդեան օրը և տարին, նաև մատեանում արձանագրելու օրը:

—Օր աւուր այդ մատեանում նշանակուում է քահանան իւր ծխերի մէջ եղած ծնունդը՝ իւրաքանչիւր ընտանիքի թերթում, նաև վախճանուածներին և ծխականութիւնից հրաժարուածներին: Մատեանը պահուում է եկեղեցում: Այդ մատեանում են արձանագրուում նաև բոլոր նորեկ ծխականները (տես. յօդ. 9):

89. Ամեն տարի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ծխական եկեղեցու քահանաները, հաշուետեսները և երեսփոխը կազմում են մի ցուցակագրող յանձնաժողով և քաղելով քահանաների մատեաններից (տես յօդ. 88) կազմում են ծխական իրաւասունների տարեցուցակ՝ ուր արձանագրուած պիտի լինին այն բոլոր կենդանի ծխականների անունները (տես յօդ. 12), որոնք արդէն հասել են կամ յաջորդ տարուայ ընթացքում հասնելու են 25 ամեայ հասակին (տես յօդ. 11):

90. Ծխական իրաւասունների տարեցուցակը պարզ և մաքուր դրուում է և նոյեմբերի 20-ից ոչ ոչ կախուում է եկեղեցու ներսում և դրսում մուտքի դրան մօտ և մընում է այդտեղ մշտապէս մինչև յաջորդ տարուայ ցուցակի կախելը: Հին տարեցուցակը վերցուում է նորը կախելիս: Մի մի օրինակ այդ տարեցուցակից ուղարկուում է մերձաւոր Հոգևոր իշխանութեանը և Կոնստանտնուպոլիսին:

91. Իւրաքանչիւր ծխական իրաւունք ունի բողոքելու ցուցակագրող յանձնաժողովի կազմած տարեցուցակում սարդած սխալների դէմ նախ իրան յանձնաժողովին: Եթէ ցուցակագրող յանձնաժողովը չյարդէ բողոքը, բողոքատուն իրաւունք ունի դիմել ծխական ժողովին, որն և տալիս է վերջնական վճիռ, նախ քան օրակարգի հերթական հարցերին անցնելը:

92. Ամեն մի ծխական եկեղեցու կամ աղօթատան տարեկան ընդհանուր եկամուտի մի տոկոսը (1<sup>0</sup>/<sub>10</sub>) իւրաքանչիւր տարուայ վերջում ուղարկուում է մերձաւոր Հո-

դեոր իշխանութեան ձեռքով ս. Էջմիածնի Սինոդը՝ Մայր Աթոռի գանձարանում պահելու համար իբրև յատուկ ծխական եկեղեցիներ ղարկու գումար:

93. Այդ տոկոսը (յօդ. 92) վճարելուց ազատ են բոլոր այն ծխական եկեղեցիները և աղօթատները, որոնց տարեկան եկամուտը չէ հասնում հարիւր (100) ռուբլու:

94. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց տարեկան եկամուտը հազար (1000) ռուբլուց աւելի է, մի հազարից աւելի գումարների համար մինչև տասն հազար ռուբլին՝ վճարում են ծխական պահեստին երկու տոկոս (2<sup>0</sup>/<sub>10</sub>):

95. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց տարեկան եկամուտը տասն հազար ռուբլուց աւելի է, տասն հազարից աւելի գումարների համար՝ վճարում են ծխական պահեստի գումարին երեք տոկոս (3<sup>0</sup>/<sub>10</sub>):

96. Ծխական եկեղեցիների պահեստի գումարը գործադրում է միմիայն ամենակարօտ ծխական եկեղեցիների ամենակարևոր պէտքերին, Վեհափառ Հայրապետի բարեհաճութեամբ, ս. Էջմիածնի Սինոդի որոշմամբ, Կոնստանտնուպոլիսի միջնորդութեամբ, և կարօտ ծխական համայնքների խնդիրներն ի նկատի առնելով:

97. Ծխական պահեստի գումարից տրուած նպաստների մասին մանրամասն հրատարակուած է Ս. Էջմիածնի պաշտօնական թերթում:

98. Ծխական ժողովներն իրաւունք ունին պատճառաբանուած միջնորդութիւններ յարուցանել Վեհափառ Հայրապետի անունով տուած խնդրագրերով՝ այս կանոնադրութեան այս կամ այն կէտի փոփոխութեան համար: Այդ միջնորդութիւնները կպահուին Վեհափառ Հայրապետի Դիւանում, ծառայելու համար իբրև նիւթ այս կանոնադրութեան ապագայ բարեփոխութեանց:

99. Ռուսաց պետութեան սահմաններից դուրս (Պարսկաստան, Հնդկաստան, Տաճկաստան, Եգիպտոս, Բուլղարիա, Ռումանիա, Կիպրոս, Եւրոպա, Ամերիկա ևլն.) հայ ծխական համայնքներն, այս կանոնադրութիւնը յար-

մարեցնելով իրանց տեղական պէտքերին և եկեղեցական կազմակերպութեանը՝ ներկայացնում են Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն:

100. Այս ծխական կանոնադրութեան պաշտօնական հրատարակմամբ և գործադրութեամբ դադարում են Հոգևոր բարձրագոյն, թեմական և տեղական իշխանութիւնների կողմից այս առարկայի վերաբերութեամբ տրուած այն բոլոր թէ ընդհանուր և թէ մասնական կանոններն ու հրահանգները, որոնք չեն ստացել պետական իշխանութեան հաստատութիւնը:



**ՍԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵՒԻ** կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագրական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

Սիրեցեալ և պատուական ժողովրդեան մերոյ բնակելոյ ի տիրախնամ քաղաքն Տփլիս. Հոգեշնորհ վարդապետաց, Արժանապատիւ աւագ երիցանց, Բարեկրօն քահանայից, Ծնորհունակ սարկաւազաց և դպրաց, Պայծառափայլ իշխանաց, Գերագնիւ աստիճանաւորաց, Մեծապատիւ վաճառականաց, Պատուարժան հոգարարձուաց, Հաւատարիմ երեցփոխանաց, Վաստակաւոր ուսուցչաց, Յարգելի արհեստաւորաց, Քրտնաջան մշակաց, Համեստափայլ տիկնանց և օրիորդաց, Աշխատասէր երիտասարդաց, Ալեկարդ ծերունեաց և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացեալ մերազնէից, ողջոյն Յիսուսուանդ և օրհնութիւն Հայրապետական յԱթոռակալէս ս. Լօրն մերոյ Գրիգորի Հայաստանեայցս Առաւորչի և սէր հայրական ի Հայոց Հայրիկէս բազմացի ի Ձեզ, առ ի կալ մնալ խաղաղ, անդորր և ի ճըշ-